ԿԱՐՃԻՔ

ՀՀ կառավարության *12* հոկտեմբերի *2023* թվականին ընդունած *«2023* թվականի սեպտեմբերի *19*-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողների ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրման կարգը և տրամադրվելիք կրթաթոշակի առավելագույն չափերը հաստատելու մասին*» *N 1762-L* որոշման վերաբերյալ

1. Լեռնային Ղարաբաղից /հետայսու՝ ԼՂ/ բռնի տեղահանված ուսանողների կրթության շարունակականությունը ապահովելու և նրանց ֆինանսական աջակցությունը ապահելու համար Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2023 թվականից ի վեր ներդրվել և իրականցվում է երկու հիմնական ծրագրեր՝
   - «Հայաստանի Հանրապետության նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում մինչև 2023 թվականի սեպտեմբերի 19-ն ընդգրկված Լեռնային Ղարաբաղի սովորողների ուսման վարձի փոխհատուցման տրամադրման կարգը հաստատելու մասին[1]»:
   - «2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողների ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրման կարգը և տրամադրվելիք կրթաթոշակի առավելագույն չափերը հաստատելու մասին[2]»:

2. ԼՂ-ից բռնի տեղահանված ուսանողների ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրման կարգը և առավելագույն չափերը հաստատելու մասին որոշմամբ սահմանված են ինչպես Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողներին Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում տրամադրվելիք կրթաթոշակի առավելագույն չափերն ըստ կրթական ծրագրերի, այնպես էլ բռնի տեղահանված Լեռնային Ղարաբաղում

[1] ՀՀ Կառավարության որոշում, N 2291-L առ 21.12.2023թ.
[2] ՀՀ Կառավարության որոշում, N 1762-L առ 12.10.2023թ., https://www.arlis.am/hy/acts/184019

նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացրած ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման համակարգի ուսանողներին ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրման կարգը:

3. 2024 թվականին ՀՀ կառավարության վերոնշյալ որոշումներում կատարված փոփոխությունների արդյունքում ուսման վարձի փոխհատուցման հնարավորությունից օգտվում են նաև 2024-2025 ուսումնական տարում ՀՀ պետական բուհեր ընդունված ուսանողները՝ դառնալով աջակցության ծրագրերի շահառու:
4. <u>2025-2026 ուսումնական տարում ՀՀ բուհեր ընդունված, բռնի տեղահանված ուսանողները, սակայն, ուսման վարձի փոխհատուցման որևէ ծրագրից և ծրագրով նախատեսված հնարավորություններից չեն օգտվում, քանի որ նշված որոշումներն ու ծրագրերը չեն տարածվում 2025-2026 թթ ՀՀ բուհեր ընդունված բռնի տեղահանված ուսանողների վրա, ինչը խնդրահարույց է և բռնի տեղահանված այս խումբ ուսանողներին զրկում է կրթության իրավունքի իրացման հնարավորությունից, հատկապես աջակցության այլ ծրագրերի դադարեցման համատեքստում:</u>

5. ՀՀ Սահմանադրությունը ամրագրում է, որ Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով*:* Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է*:* Յուրաքանչյուր ոք օրենքով սահմանված դեպքերում և կարգով ունի մրցութային հիմունքներով պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունք[3]*:*

6. «Կրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն*:*... Պետությունը բյուջետային նպատակային ֆինանսավորման միջոցով ապահովում է կրթության բնագավառի պահպանումը և զարգացումը*,* որի ծավալները որոշվում են կրթության զարգացման պետական ծրագրին համապատասխան[4]*:*

7. Նույն օրենքով նախատեսված են նաև կրթության բնագավառում պետության քաղաքականության սկզբունքները: Մասնավորապես՝

[3] ՀՀ Սահմանադրություն հոդված 38, 2015 թվականի փոփոխություններով
[4] Կրթության մասին ՀՀ օրենք, հոդված 4

Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն են՝

«1) կրթության մարդասիրական բնույթը, համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության, ազգային արժանապատվության, հայրենասիրության, օրինականության և բնապահպանական աշխարհայացքի դաստիարակությունը.

2) կրթության մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստականության աստիճանին՝ պետական պարտադիր նվազագույնի ապահովմամբ....[5]*»*:

8. Հաշվի առնելով ներկայացված ծրագրերի սահմանափակումները՝ բռնի տեղահանված մի քանի տասնյակ ուսանողների կրթության իրավունքի ապահովման հրատապ խնդիրն ու հնարավորությունների բացակայությունը, ինչպես նաև վերը ներկայացված ՀՀ ներպետական կարգավորումները՝

Առաջարկում ենք ՀՀ կառավարության *N 1762-L* որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություններ և ուսման վարձի փոխհատուցման հնարավորություն մրցութային կարգով տրամադրել նաև *2025-2026*թթ. ՀՀ բուհեր ընդունված բռնի տեղահանված ուսանողներին՝ այդ հնարավորությունից օգտվող նույն պայմաններում տեղահանված այլ ուսանողների հետ համահավասար կարգով:

9. Ներկայացվող առաջարկը հիմնավորվում է մի շարք օբյեկտիվ հանգամանքներով, որոնք ներկայացվում ենք ստորև՝

   - Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված արցախցիների և նրանց ընտանիքների սոցիալ-տնտեսական ինտեգրումը դեռևս չի ապահովել սոցիալական կայունության այնպիսի մակարդակ, որը թույլ կտա տեղահանված ընտանիքներին սեփական միջոցներով հոգալ ուսանողների ուսումնական ծախսերը: Ավելին՝ 2025 թվականի հունիս ամսվանից զգալիորեն նվազել են պետության կողմից բռնի

[5] Նույն տեղում, հոդված 5

տեղահանվածներին ուղիղ դրամական աջակցության տեսքով տրվող սոցիալական աջակցությունները, որոնք օգտագործվում էին բնակարանային վարձավճարի և կոմունալ ծախսերը հոգալու համար: Նման իրավիճակում ավելի է խորացել տեղահանվածների առանց այն էլ սոցիալ-տնտեսական խոցելի իրավիճակը: Մյուս կողմից՝ բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրին դիմած շահառուների վիճակագրությունը (շուրջ 2000 ընտանիք) ցույց է տալիս, որ ծրագրի շահառու ընտանիքների մեծամասնությունը դեռևս չի դիմել և չի օգտվել այդ ծրագրից և բավականին ժամանակ է պահանջվելու, որպեսզի տեղահանվածները անցնեն օրենսդրությամբ սահմանված գործընթացով և վերջնական և երկարաժամկետ լուծեն կեցության հարցը: Նման իրավիճակում ՀՀ բուհեր նոր ընդունված ուսանողների վարձավճարը մեծապես ավելացնելու է բռնի տեղահանված ընտանիքների ֆինանսական բեռը՝ նրանց դնելով անօգնական իրավիճակի մեջ: Կամ **չկարողանալով կատարել ուսման վճարները՝ այդ խումբ ուսանողները դուրս են մնալու ուսումնական հաստատություններից և զրկվեն կրթություն ստանալու հնարավորությունից:**

- Կրթությունը հանդիսանում է տեղահանված անձանց սոցիալական ինտեգրման և երկարաժամկետ կայունության հասնելու հիմնական գործիքներից մեկը: Նոր ընդունված ուսանողներին աջակցություն չտրամադրելը կարող է հանգեցնել մի իրավիճակի, որ ընտանիքի ֆինանսական ծանրաբեռնվածության պատճառով ուսանողներն ուղղակի չշարունակեն իրենց ուսումնառությունը, իսկ կրթաթոշակների շարունակական տրամադրումը կապահովի, որ տեղահանված երիտասարդները չզրկվեն բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունից՝ անկախ իրենց ընտանիքների ֆինանսական դրությունից, ինչը կնպաստի նրանց առավել արդյունավետ ինտեգրմանը հայաստանյան հասարակությունում և աշխատաշուկայում կդարձնի առավել մրցունակ:
- Թեև մշակվել են տեղահանված անձանց զբաղվածությանը նպաստող միջոցառումներ, մինչ օրս տեղահանված անձանց զգալի մասը, այդ թվում՝ զբաղվածություն ունեցող, չունի անգամ նվազագույն սպառողական զամբյուղն ապահովող եկամուտ, որի մասին վկայում է ՀՀ կառավարության 10 ապրիլի 2025 թվականի N 417-L որոշմամբ հաստատված ծրագրի շահառու դառնալու վերաբերյալ դիմումների մեծ թիվը:

➢ **Ուսանողների հոգեբանական բարօրության և կյանքի որակի պահպանումը ևս պետք է դիտարկվի որպես ՀՀ կառավարության աջակցության ծրագրի շարունակման**

կարևորություն հաստատող գործոն: Բռնի տեղահանման հետևանքով երիտասարդները կրել են լուրջ հոգեբանական վնասներ՝ կապված ոչ միայն հայրենիքի կորստի, այլև ապագայի անորոշության հետ: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այս խումբ անձանց տարիքային առանձնահատկությունները, դեռևս ձևավորվող աշխարհայացքն ու նման զրկանքների ազդեցությունը վերջիններիս կյանքի և ապագայի վրա: Այս պայմաններում ուսման գործընթացի անխափանությունը ոչ միայն կրթական նշանակություն ունի, այլև հոգեբանական կայունության, նպատակասլացության ու կյանքի շարունակականության զգացողության վերականգնման գործում ունի առանցքային դեր: Ուսման վարձի պետական աջակցության դադարեցումը կարող է դառնալ լրացուցիչ սթրեսի, խտրականության զգացողության և հիասթափության աղբյուր՝ խաթարելով ուսանողների մոտիվացիան ու մղելով նրանց կրթությունից հրաժարվելու վտանգին:

- Ծրագրի շարունակականությունը նաև արդարության և հավասար հնարավորությունների սկզբունքի պահպանում է պահանջում: Եթե 2024-2025թթ ուսումնական տարվա ուսանողները ներառվել են աջակցության ծրագրում, ապա 2025-2026թթ ուսումնական տարվա դիմորդներին բացառելը կստեղծի անհավասար պայմաններ նույն սոցիալական վիճակում գտնվող անձանց համար: Բռնի տեղահանման հետևանքները, որպես կանոն, չեն վերանում մեկ կամ երկու տարվա ընթացքում, ուստի բոլոր այն ուսանողները, ովքեր դիմում են բուհեր նույն արտակարգ և ճգնաժամային հետևանքների ներքո, պետք է հավասար աջակցություն ստանան՝ անկախ ընդունվելու տարեթվից: Հակառակ դեպքում ստացվում է, որ 2023-2024 թթ. և 2024-2025թթ. ընդունված ուսանողները ստանում են ուսման վարձը հատուցելու աջակցություն մի քանի տարվա կտրվածքով, իսկ նույն խոցելիություն ունեցող 2025թ. դիմորդները չեն ստանում որևէ աջակցություն: Արդյունքում ձևավորվում է անհավասարության, անարդարության զգացում և լարվածություն:

10. Գիտակցում ենք, որ Հայաստանում սոցիալապես անապահով դիմորդներ ևս կան, ովքեր նույնպես կարիք ունեն ֆինանսական աջակցության՝ ուսումը շարունակելու նպատակով: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձինք ունեն բազմակողմանի խոցելիություն՝ կորցրել են ողջ ունեցվածքը, բնակվում են վարձակալության հիմունքներով, չունեն հնարավորություն վերադառնալ իրենց բնակության վայր,

աջակցության ծրագրերի դադարեցումը կամ զգալիորեն նվազեցումը համընկել է ուսումնական տարվա սկզբի հետ և առաջացրել է կրկնակի սթրես:

11. Հայցվող միջոցառումը հանդիսանում է ժամանակավոր բնույթի հրատապ աջակցության միջոց, որը, ինչպես նշվեց, մեծապես կնպաստի բռնի տեղահանված անձանց ինտեգրմանը:
12. Հաշվի առնելով ներկայացված փաստերը, հիմնավորումներն ու իրավական կարգավորումները՝ ներքոստորագյալ կազմակերպությունները **առաջարկում են՝**

- «ՀՀ կառավարության 12 հոկտեմբերի 2023 թվականին ընդունած «2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողների ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրման կարգը և տրամադրվելիք կրթաթոշակի առավելագույն չափերը հաստատելու մասին» N 1762-Լ» որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ նախատեսելով 2025-2026 ուսումնական տարում ընդունված, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողներին աջակցություն տալու հնարավորությունը ևս:
- Որպես հնարավոր լուծում փոփոխություններով նախատեսել, որ նման հնարավորությունից կարող են օգտվել աջակցության ծրագրի պայմանները բավարարող, սոցիալական կարիքի հանգամանքը հիմնավորող ՀՀ կրթական հաստատություններ ընդունված ուսանողները (օրինակ՝ ՀՀ կառավարության 10 ապրիլի 2025 թվականի N 417-Լ որոշմամբ նախատեսված ծրագրի շահառու հանդիսացող կամ մեկ անձի հաշվարկով որոշակի եկամուտից նվազ եկամուտ ունեցող անձանց համար):

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ

«Հանուն հավասար իրավունքների» ՀԿ

«Վեկտոր» ՀԿ

«Հորիզոններ» ՀԿ

«Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ

«Արարիչ մանկապատանեական և երիտասարդական զարգացման կենտրոն» ՀԿ

«Արցախ միություն» ՀԿ

«Արցախի մարդու իրավունքների պաշտպան» ՀԿ

«Ուս ուսի» բարեգործական հիմնադրամ

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիան կենտրոն

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ

«Կանանց կենտրոն. Շուշի» ՀԿ

«Արցախի Թեքեյան մշակութային միություն» ՀԿ